

«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի N 370-Ն հարամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրաման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ

ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o _____-Ն
_____ 2022թ.

«_____»

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N 370-Ն ՀԱՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջով և հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» N 370-Ն հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված

Կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի 2022 թվականի
-ի N -Ն հրամանի

«Հավելված

Կրթության և գիտության
նախարարի 2017 թվականի
ապրիլի 13-ի N 370-Ն հրամանի

ԿԱՐԳ

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ**

1. Ընդհանուր դրույթներ

2. Սույն կարգով կարգավորվում են կրթական գործընթացի մասնակիցներին «Հանրակրթության մասին օրենքով» սահմանված կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների (այսուհետև՝ Աջակցության ծառայություններ) տրամադրման հետ կապված հարաբերություններն ըստ մակարդակների.

- ուսումնական հաստատության, որը տրամադրվում է հանրակրթական ուսումնական հաստատության կողմից (այսուհետև՝ Հաստատություն),
- տարածքային, որը տրամադրվում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից (այսուհետև՝ Տարածքային կենտրոն).
- հանրապետական, որը տրամադրվում է հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից (այսուհետև՝ Հանրապետական կենտրոն):

2. Աջակցության ծառայությունները կրթական գործընթացի մասնակիցներին տրամադրվում են չորս հիմնական ուղղություններով՝

- հարմարեցված և մատչելի միջավայրի ստեղծում.
- խելամիտ հարմարեցումների տրամադրում.
- կրթության մատչելիության, ներառականության, որակի ու արդյունավետությունը բարձրացում.
- Սովորողի Անհատական ուսուցման պլանով (այսուհետև՝ ԱՌԴ) սահմանված աջակցության ծառայությունների տրամադրում (Ձև 1):

3. Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ եզրակացությունն ու արձանագրությունը ստանալուց հետո՝ 5-10 աշխատանքային օրվա ընթացքում, Հաստատությունն ու Տարածքային կենտրոնը միասին մշակում և հաստատում են սովորողի ԱՌԴ-ը, որով սահմանվում են կրթության առանձնահատուկ պայմանները և այդ պայմանների ապահովմանն ուղղված սովորողին, նրա մանկավարժներին և ծնողին տրամադրվող Աջակցության ծառայությունները՝ ըստ մակարդակների (համաձայն ձև 2 և ձև 3): Յուրաքանչյուր հաջորդ տարում, այդ թվում հերթական գնահատումների ժամանակ ԱՌԴ-ը մշակվում և հաստատվում է մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 20-ը:

4. Հաստատության և Տարածքային կենտրոնի տնօրենների տեղակալները, համատեղ, երկու ամիսը մեկ անգամ, հրավիրում են միասնական ժողով՝ ամփոփելու տվյալ ամիսների ընթացքում տրամադրված աջակցության ծառայությունները, արձանագրելու սովորողների ունեցած ձեռքբերումները, առաջընթացը և առկա դժվարությունները, առաջարկներ ներկայացնելու սովորողի մոտ առկա դժվարությունների հաղթահարման աշխատանքների ձևերի և մեթոդաբանության ուղղությամբ: Միասնական ժողովի արձանագրությունը հաստատում են Տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալը և Հաստատության տնօրենի տեղակալը (Ձև 4): ԱՌԴ-ը և ԱՌԴ-ի գնահատման արձանագրությունը հիմք է հանդիսանում Հանրապետական կենտրոնի կողմից իրականացվող մշտադիտարկումների համար:

5. Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման

և Աջակցության ծառայությունների տրամադրման ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը Տարածքային կենտրոնը և Հաստատությունը մուտքագրում են Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների տվյալների միասնական բազա:

6. Սովորողի վերաբերյալ մշակված անձնական տվյալները (ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել սովորողի ինքնությունը), գաղտնի են և չեն կարող փոխանցվել երրորդ անձանց՝ առանց ծնողի (օրինական ներկայացուցչի) (այսուհետև՝ Ծնող) գրավոր համաձայնության: Տվյալների փոխանցումը երրորդ անձանց՝ առանց Ծնողի համաձայնության, հնարավոր է միայն օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում

7. Սովորողի՝ հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ կրթության առանձնահատուկ պայմանները, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումները սահմանելու նպատակով իրականացվում է սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում՝ Տարածքային կենտրոնի կողմից:

8. Սովորողի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը բաղկացած է երեք փուլից՝

- 1-ին փուլ՝ սովորողի կրթական ծրագրերին մասնակցության դիտարկում,
- 2-րդ փուլ՝ սովորողի զարգացման հնարավորությունների բացահայտում և գնահատում,
- 3-րդ փուլ՝ կրթության առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանում.

9. Սովորողի՝ կրթական ծրագրերին մասնակցության դիտարկումն ու զարգացման հնարավորությունների բացահայտումը իրականացվում են սովորողի ուսումնական հաստատությունում՝ ուսուցման և ուսումնառության ընթացքում:

10. Գնահատման 1-ին և 2-րդ փուլերի ընթացքում ուսումնասիրվում է նաև սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման տեղեկատվությունը:

11. Գնահատման 3-րդ փուլն իրականացվում է առաջին և երկրորդ փուլերի ընթացքում հավաքագրված տեղեկատվության հիման վրա:

12. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման երեք փուլերի ավարտից հետո սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ Տարածքային կենտրոնը կազմում է արձանագրություն և տալիս եզրակացություն:

13. Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հերթական գնահատումն իրականացվում է կրթական յուրաքանչյուր աստիճանին անցման նախորդող ուսումնական տարվա ավարտին կամ տվյալ ուսումնական տարվա սկզբին (առաջին, հինգերորդ և տասներորդ դասարաններում), եթե մինչ այդ սովորողի համար կրթության առանձնահատուկ նոր պայմանների սահմանման անհրաժեշտություն չի առաջացել:

3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման կազմակերպման գործընթացը

14. Եթե ուսումնական գործընթացում սովորողի մոտ նկատվել են ուսումնառության հետ կապված կայուն դժվարություններ, ապա ուսումնական հաստատությունը, Ճնողի համաձայնության հիման վրա, հայտ է ներկայացնում տվյալ ուսումնական հաստատությունը սպասարկող Տարածքային կենտրոն՝ իրականացնելու սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում (Ձև 5):

15. Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը կարող է իրականացվել նաև անմիջականորեն Ճնողի դիմումի հիման վրա՝ նույն ընթացակարգով (Ձև 6):

16. Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացը ղեկավարում է Տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալը, ով պատասխանու է ողջ գործընթացի սահուն և օբյեկտիվ իրականացման համար:

17. Ուսումնական հաստատությունում սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացի կազմակերպման և համակարգման պատասխանատուն ուսումնական հաստատության [տնօրենի տեղակալն է:](#)

18. Սովորողին կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ներկայացնելու համար հանրակրթական ուսումնական հաստատության տնօրինությունը կազմում է հետևյալ փաստաթղթերի փաթեթը՝

- ուսումնական հաստատության հայտը.
- Ճնողի գրավոր դիմումը.
- Ճնողի անձնագրի և երեխայի ծննդյան վկայականի պատճենը.
- սովորողի հանրային ծառայության համարանիշը.
- սովորողի ուսումնառության ընթացքում արձանագրված կայուն դժվարությունների.
- ինչպես նաև հայտորոշիչ և ձևավորող գնահատման ընթացքում հավաքագրած տեղեկատվության ամփոփ նկարագրությունը (Ձև 7).
- առկայության դեպքում՝ սովորողի հայտորոշիչ և ձևավորող գնահատման արձանագրությունները

- այլ փաստաթղթեր, որոնք, ըստ ուսումնական հաստատության կամ Ճնողի հայեցողության, կարող են սովորողի մասին օգտակար տեղեկատվություն տրամադրել:

19. Ուսումնական հաստատության հայտը և անհրաժեշտ մյուս փաստաթղթերը ստանալուց հետո, առնվազն 5 աշխատանքային օրվա ընթացքում, Տարածքային կենտրոնը նշանակում է սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը սկսելու օրը, որի մասին նախօրոք տեղեկացնում է ուսումնական հաստատությանը:

20. Տարածքային կենտրոնի տնօրենի հրամանով ձևավորվում է տվյալ սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատող մանկավարժական աշխատողների խումբ (Գնահատող խումբ): Գնահատող խմբում ներառում է Տարածքային կենտրոնի առնվազն երկու մանկավարժ (հատուկ մանկավարժ և սոցիալական մանկավարժ) և մեկ հոգեբան, ըստ անհրաժեշտության Գնահատող խմբում կարող են ներգրավված լինել նաև այլ մանկավարժներ և մասնագետներ:

- 21. Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացում ներգրավված են նաև ուսումնական հաստատության ուսուցիչները, այլ մանկավարժական աշխատողները, սովորողը և նրա Ճնողը:

22. Ուսումնական հաստատությունում սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը տևում է 5-ից 25 աշխատանքային օր:

23. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ավարտից հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում, Գնահատող խումբը սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների վերաբերյալ կազմում է արձանագրություն և տալիս եզրակացություն:

24. Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արձանագրությունը և եզրակացությունը հաստատում է Տարածքային կենտրոնի տնօրենը: Արձանագրության և եզրակացության բնօրինակը Տարածքային կենտրոնը տրամադրում է սովորողի Ճնողին, իսկ պատճենը՝ ուսումնական հաստատություն:

25. Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ Տարածքային կենտրոնի կողմից տրված եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում, սովորողի Ճնողը կարող է եզրակացությունը ստանալուց հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր բողոքարկել հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն:

26. Ճնողի գրավոր բողոքը ստանալու և մուտքագրելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի տնօրենի հրամանով ստեղծվում է բողոքը քննող հանձնաժողով (այսուհետ Հանձնաժողով):

27. Հանձնաժողովը Տարածքային կենտրոնից ստանում է սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ընթացքում

հավաքագրված և փաստաթղթավորված ողջ տեղեկատվությունը:

28. Բողոքը քննության առնելիս Հանձնաժողովը, ըստ անհրաժեշտության, կարող է հրավիրել համապատասխան այլ մասնագետներ, ինչպես նաև սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատած Տարածքային կենտրոնի խմբին, ուսումնական հաստատության [տնօրենի տեղակալին](#), ուսուցիչներին և մանկավարժական աշխատողներին, սովորողի ճնողին: Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովը կարող է իրականացնել ուսումնական գործընթացում սովորողի դիտարկում:

29. Բողոքի քննությունը իրականացվում է 5 աշխատանքային օրվա ընթացքում:

30. Բողոքի քննությունը ավարտելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, Հանձնաժողովը ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

- Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման եզրակացությունը անփոփոխ թողնելու մասին, կամ
- Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների գնահատման եզրակացությունը Տարածքային կենտրոնի կողմից վերանայելու մասին:

31. Հանձնաժողովի ընդունած որոշումը վավերացնում է Հանրապետական կենտրոնի տնօրենը:

32. Հանձնաժողովի ընդունած որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված դատական կարգով:

4. Հաստատության մակարդակի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը

33. Հաստատության մակարդակի Աջակցության ծառայությունների պատասխանատուն ուսումնական հաստատության տնօրենն է:

34. Հաստատության մակարդակի աջակցության ծառայությունները տրամադրվում են Հաստատության մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից (այսուհետև՝ Հաստատության խումբ), որի կազմում ընդգրկվում են առարկայական մեթոդական միավորումների մանկավարժները, դասղեկը, ուսուցչի օգնականը, գրադարանավարը, սոցիալական մանկավարժը, հոգեբանը, լաբորանտը և երկարօրյա խմբերի մանկավարժական աշխատողները:

35. Աջակցության ծառայությունների կազմակերպման և Հաստատության խմբի աշխատանքների համակարգման պատասխանատուն ուսումնական հաստատության [տնօրենի տեղակալն է:](#)

36. Հաստատության մակարդակի Աջակցության ծառայությունների տրամադրումը, համաձայն սույն կարգի 2-րդ կետի, իրականացվում է ԱՌԴ-ի հաստատումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

37. Հաստատության տնօրենը.

- ապահովում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ԱՌԴ-ով սահմանված խելամիտ հարմարեցումների՝ ուսուցման անհատական տեխնիկական միջոցների և գույքի, սարքավորումների, մատչելի ձևաչափերով (տպագիր, աուդիո և վիդեո) մշակած ուսումնական նյութերի, բանավոր և գրավոր հաղորդակցման այլընտրանքային միջոցների տրամադրումը.
- պետական բյուջեի միջոցների հաշվին, ստեղծում է Հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ազատ տեղաշարժն ու կրթական գործընթացին նրանց ակտիվ մասնակցությունը հեշտացնող մատչելի միջավայր, այդ թվում՝ մատչելի տարածքով և գույքով դասասենյակներ, լաբորատորիաներ, ճաշարան, մարզադահլիճ, գրադարան և սանհանգույցներ.
- անհրաժեշտության դեպքում ապահովում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ընդգրկումը Հաստատության երկարօրյա խմբերում, համաձայն Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 13-ի N 38-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի»:

38. Հաստատության խումբը աջակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի հետ աշխատող մանկավարժական աշխատողներին.

- պլանավորելու, ապահովելու և գնահատելու առարկայական չափորոշիչներով և ծրագրերով նախատեսված՝ սովորողի առանձնահատուկություններին, զարգացման հնարավորություններին և առավելագույն ներուժին համապատասխան գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորումը.
- կիրառելու դասավանդման աշակերտակենտոն և ինտերակտիվ մեթոդներ՝ յուրաքանչյուր սովորողի համար ուսումնական գործընթացը հավասարապես խթանելու, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ներառումն ու ակտիվ մասնակցությունն ապահովելու համար.
- սովորողի մանկավարժներին, սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքին համապատասխան, իրականացնելու առաջադրանքի, թեստերի, գիտելիքների ստուգման, գնահատման ու ժամանակի պլանավորման խելամիտ հարմարեցումներ.
- սովորողներին և ծնողներին՝ ուսման մեջ, առօրյա հարաբերություններում և արտակարգ իրավիճակներում հանդիպող արգելքների և դժվարությունների հաղթահարման գործընթացում.
- տրամադրելու երկարօրյա խմբերում ընդգրկված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին նրանց

ԱՌԻՊ-ներով սահմանված աջակցության ծառայություններ՝ դասապատրաստում, ինքնուրույն սովորելու հմտությունների ձևավորում ու զարգացում:

39. Հաստատության տնօրենի տեղակալը կարող է հրավիրել ընդլայնված ժողով՝ Տարածքային խմբի անդամների մասնակցությամբ, եթե անհրաժեշտություն է առաջացել վերանայելու սովորողի ԱՌԻՊ-ով սահմանված Աջակցության ծառայությունները՝ համաձայն սովորողի ուսումնառության արդյունքների:

40. Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, գնահատման արձանագրության և եզրակացության պատճենը, հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ (բնութագրող և միավորային) գնահատումների փաթեթները և Աջակցության ծառայությունների Անհատական աջակցության պլանի բնօրինակը պահպանվում է սովորողի Անհատական թղթապանակում:

41. Հաստատությունում սովորողի Անհատական թղթապանակի պատասխանատուն Հաստատության տնօրենի տեղակալն է:

5. Տարածքային մակարդակի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը

42. Տարածքային մակարդակի Աջակցության ծառայությունների տրամադրման, որակի և արդյունավետության պատասխանատուն Տարածքային կենտոնի տնօրենն է:

43. Տարածքային մակարդակի աջակցության ծառայությունները տրամադրվում են Տարածքային կենտոնի մանկավարժահոգեբանական խմբի կողմից (այսուհետև՝ Տարածքային խումբ), որի կազմում ընդգրկված են առնվազն մեկ հատուկ մանկավարժ, մեկ սոցիալական մանկավարժ և մեկ հոգեբան, իսկ ըստ անհրաժեշտության նաև այլ մանկավարժներ և մասնագետներ:

44. Տարածքային աջակցության ծառայությունների կազմակերպման և Տարածքային խմբի աշխատանքների համակարգման պատասխանատուն Տարածքային կենտոնի [տնօրենի տեղակալն է:](#)

45. Հաստատությունում Տարածքային մակարդակի աջակցության ծառայությունները տրամադրվում են սովորողին, նրա մանկավարժներին և Ճնողին համաձայն ԱՌԻՊ-ով սահմանված գործողությունների:

46. Տարածքային աջակցության ծառայությունների տրամադրումը սկսվում է ԱՌԻՊ-ի հաստատումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

47. Տարածքային կենտոնը խորհրդատվություն և գործնական աջացություն է տրամադրում Հաստատությանը.

- սովորողի անհատական ուսուցման պլանով (ԱՌԴՊ) սահմանված խելամիտ հարմարեցումների (ուսուցման անհատական տեխնիկական միջոցներ, գույք և սարքավորումներ, մատչելի ձևաչափերով (տպագիր, աուդիո և վիդեո) մշակած ուսումնական նյութեր, բանավոր և գրավոր հաղորդակցման այլընտրանքային միջոցներ) ձեռք բերման ու ստեղծման հարցերով.
- մշակելու մատչելի միջավայրի ստեղծման տեխնիկական առաջադրանքներ՝ մատչելի միջավայրի չափանիշներին, այդ թվում՝ համընդհանուր դիզայնի չափանիշներին համապատասխան.
- ձեռքբերելու համապատասխան գույք և սարքավորումներ, ապահովելու համար մատչելի տարածքով դասասենյակներ, լաբորատորիաներ, ճաշարան, մարզադահլիճ, գրադարան և սանհանգույցներ:

48. Հաստատությունում Տարածքային խումբը Հաստատության ուսուցիչներին և մանկավարժական թիմին տրամադրում է Աջակցություն հետևյալ ուղղություններով.

- սովորողի ուսումնական գործընթացում ակտիվ մասնակցությունը խթանելու նպատակով իրականացնում է սովորողի առաջընթացի, դասաժամերին նրա ներգրավվածության և մասնակցության դիտարկում.
- սովորողի հետ աշխատող մանկավարժներին (Հաստատության խումբ) տրամադրում է խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն սովորողի ուսումնական նյութերի հարմարեցումների, դասի պլանավորման, սովորողի մասնակցությունը խթանող դասավանդման մեթոդների, դասարանում սովորողի նստատեղի, առաջադրանքների հանձնարարման ու կատարման ձևերի ընտրության, դասընկերների հետ սոցիալական հարաբերությունների և շփումների խթանման հարցերում.
- խորհրդատվություն և գործնական աջակցություն են տրամադրում սովորողի հետ աշխատող մանկավարժներին, սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքին համապատասխան, իրականացնելու առաջադրանքի, թեստերի, գիտելիքների ստուգման, գնահատման ու ժամանակի պլանավորման խելամիտ հարմարեցումներ ապահովելու նպատակով.
- խորհրդատվության տրամադրում երկարօրյա խմբերում ընդգրկված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ աշխատող մանկավարժներին՝ դասապատրաստման, ինքնուրույն սովորելու հմտությունների ձևավորման ու զարգացման հարցերում.
- սովորողի Ծնողին խորհրդատվության տրամադրում սովորողի ուսումնառության արդյունավետության բարձրացման, առկա դժվարությունների հաղթահարման և սոցիալական ու կենցաղային հմտությունների զարգացման ուղղություններով:

49. Դասերից հետո, սովորողի ԱՌԴՊ-ով սահմանված Տարածքային

աջակցության ծառայություններ է տրամադրում սովորողին Հաստատությունում, իսկ Ճնողի դիմումի հիման վրա՝ նաև Տարածքային կենտրոնում: Սովորողին տրամադրվող կրթության կազմակերպման տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տեսակը, տևողությունն ու ծավալները սահմանված են ձև 8-ում:

50. Տարածքային կենտրոնը Հաստատության մանկավարժների և նրանց Ճնողների համար մշակում և իրականացնում է դասընթացներ ու գործնական պարապմունքներ՝ կրթական ծառայությունների մատչելիության, ներառականության, որակի ու արդյունավետության բարձրացման հարցերով:

6. Հանրապետական մակարդակի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը

51. Հանրապետական մակարդակի Աջակցության ծառայությունների տրամադրման, որակի և արդյունավետության պատասխանատուն Հանրապետական կենտրոնի տնօրենն է:

52. Հանրապետական մակարդակի աջակցության ծառայությունների կազմակերպման և աշխատանքների համակարգման պատասխանատուն Հանրապետական կենտրոնի [տնօրենի տեղակալն է:](#)

53. Հանրապետական մակարդակի Աջակցության ծառայությունները, ըստ տնօրենի հաստատած տարեկան պլանի և ժամանակացույցի, տրամադրվում են Տարածքային կենտրոնների տնօրեններին, մանկավարժական աշխատողներին և հոգեբաններին հետևյալ ուղղություններով.

- Վերապատրաստումների (կամ դասընթացների և սեմինար պարապմունքների) կազմակերպում ու իրականացում՝ յուրաքանչյուր Տարածքային կենտրոնում՝ տարեկան առնվազն երկու անգամ.
- Տարվա ընթացքում Տարածքային կենտրոնի աշխատակիցների համար կազմակերպում է խորհրդատվություն սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման, եզրակացության կազմման և նրա ԱՌԻՊ-ով կրթության առանձնահատուկ պայմանների սահմանման հարցերով.
- Յուրաքանչյուր Տարածքային կենտրոնում տարեկան առնվազն երկու անգամ կազմակերպում է դասընթաց կամ սեմինար պարապմունք՝ խելամիտ հարմարեցումների տրամադրման, ուսումնական նյութերի, թեստերի և գիտելիքների ստուգման ձևերի հարմարեցումների, դասի պլանավորման, դասավանդման մեթոդների, սովորողին տրամադրվող աջակցության ծառայությունների, ինչպես նաև ծնողավարությանն առնչվող հարցերով.

54. Հանրապետական կենտրոնը կազմակերպում է տարածքային

աջակցության ծառայությունների շարունակական մշտադիտարկում՝ յուրաքանչյուր մարզում առնվազն ամիսը մեկ անգամ և, տվյալ եռամսյակի ավարտին, վերլուծում է հավաքագրած տեղեկատվությունն ու յուրաքանչյուր Տարածքային կենտրոնի առաջարկություններ է ներկայացնում՝ աջակցության ծառայությունների բարելավման ուղղությամբ:

Ձև 1

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈւՍՈւՑՄԱՆ ՊԼԱՆ

1. ՍՈՎՈՐՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐ

- 1.1 Ազգանուն, անուն, հայրանուն՝
- 1.2 Ծննդյան վայր՝
- 1.3 Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝
- 1.4 Սեռը՝ ծ իգական ծ արական
- 1.5 Քաղաքացիությունը՝
- 1.6 Բնակության հասցեն՝
- 1.7 Ուսումնական հաստատությունը՝
- 1.8 Դասարանը (նշել ուսումնական տարին)՝
- 1.9 Ծնողների (օրինական ներկայացուցիչների) անուններն ու հեռախոսահամարները՝
- 1.10 Արտակարգ իրավիճակների դեպքում՝ կապի միջոց՝ աշխատանքային և բնակարանային հասցեները՝

1. ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1 Հաշմանդամություն

ունի չունի

2.2 Բացառիկ ընդունակությունների դրսևորումը հետևյալ ոլորտներում

2.3 Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության աստիճանը՝ տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության հետ կապված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք **Աջակցության աստիճանը՝ 1-ին**

Խոսքի և լեզվի
Հաղորդակցման
Լսողության
Տեսողության
Ինտելեկտի (մտավոր)
Հուզական
Վարքի
Շարժունակության

2.4 ՍՈՎՈՐՈՂԻ ՆԿԱՐԱԳԻՐ

.
.
.

1. ՍՈՎՈՐՈՂԻ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ՝ ՏԱՐԵԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵ

6.1 ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Արդյունք բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավորով

1 - շատ վատ	2 - վատ	3 - բավարար	4 - լավ	5 - շատ լավ
Լոգոպեդ _____				
Տարեկան նպատակ			Կարճաժամկետ նպատակներ	

1. .
. .
. .

Տիֆլոմանկավարժ _____				
Տարեկան նպատակ			Կարճաժամկետ նպատակներ	

1. .
. .
. .

Սուրդոմանկավարժ _____				
Տարեկան նպատակ			Կարճաժամկետ նպատակներ	

1. .
. .
. .

Օլիգոֆրենոմանկավարժ _____				
Տարեկան նպատակ			Կարճաժամկետ նպատակներ	

1. .
. .
. .

6.2 ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հոգեբան _____

Արդյունք բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավորով

1 - շատ վատ	2 - վատ	3 - բավարար	4 - լավ	5-շատ լավ
Տարեկան նպատակ			Կարճաժամկետ նպատակներ	

1. .

6.3 ՍՈՑԻԱԼ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական մանկավարժ _____

Արդյունք բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավորով

1 - շատ վատ	2 - վատ	3 - բավարար	4 - լավ	5-շատ լավ
Տարեկան նպատակ		Կարճաժամկետ նպատակներ		

1.

1. ԱՌԻՊ-Ի ՏԱՐԵՎԵՐԶՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

7.1 ՍՈՎՈՐՈՂԻ ՆԿԱՐԱԳԻՐ

7.2 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՋՈՐԴ ՏԱՐՎԱ ԿԱՄ ՀԱՋՈՐԴ ԿՐԹԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Սովորողի կրթության արդյունավետ իրականացման համար առաջարկվում է՝

ծ **Սովորողի կրթությունը կազմակերպել անհատական ուսուցման պլանով**

· Հետևյալ հանրակրթական առարկայական ծրագրերի հարմարեցումներով (նշել բնագավառը)

_____	_____
_____	_____
_____	_____

· Հետևյալ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցում

ծ Հատուկ մանկավարժական ծառայություն (լրգոպեդ, օլիգոֆրենոմանկավարժ, սոցիալական աշխատանք)

ծ Սոցիալական մանկավարժի ծառայություն

ծ Հոգեբանական ծառայություն

ծ Իրականացնել սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար

ծ _____ (խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, խանգարմամբ պայմանավորված մանկավարժահոգեբանական աջակցության _____)

ծ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը չեղարկելու նպատակով:

Գնահատման հիմնավորում _____

ԾՆՈՂԻ (ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ) ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄԸ

Ես՝ _____ ս, սույնով հավաստիացնում եմ, որ մասնակցի մշակման գործընթացին և գիտակցում եմ, որ սույն ԱՈԼԴ-ի տարեկան և կարճաժամկետ և պարզեցվել են երեխայիս կարողությունների և հմտությունների առավելագույն ներուժը ձեռքբերումները գնահատվելու են ըստ իր ԱՈԼԴ-ով սահմանված նպատակների:

_____ (անուն, ազգանուն)

_____ (ստորագրություն)

ԱՈԼԴ-ը մշակող խումբ՝

- Ազգանուն, անուն
- 1. _____
- 1. _____
- 1. _____
- 1. _____
- 1. _____

Պաշտոն

Հաստատված է՝

հանրակրթական ուսումնական

հաստատություն

կենտրոն

Տնօրեն՝ _____

Տնօրեն՝ _____

(ստորագրություն)

(անուն ազգանուն)

(ստորագրություն)

Ամսաթիվ՝

ԿՏ

Ամսաթիվ՝

Ձև 2

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Անուն, հայրանուն, ազգանուն՝ _____

Ծննդյան օր, ամիս, տարի՝ _____, Ծննդյան վկայական՝ _____

Ուսումնական հաստատություն՝ _____

Դասարան՝ _____

Գնահատման սկիզբ՝ _____, Գնահատման ավարտ՝ _____

Բողոքարկում

Հաշմանդամություն

Ունի

Չունի

_____ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրենի _____ հրամանով ձևավորված գնահատման մասնագետների խումբն արձանագրել է հետևյալ տեղեկատվությունը և արել հետևյալ առաջարկությունները՝

սովորողին տրամադրվող կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների

ունի _____ (խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության) խանգարումով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և սովորողին տրամադրվող կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական ծառայությունների _____ (1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ) աստիճանի աջակցության կարիք:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք **1-ին** **2-րդ** **3-րդ**

խոսք և լեզվի

Հաղորդակցման

Լսողության

Տեսողության

Ինտելեկտի (մտավոր)

Հուզական

Վարքի

Շարժունակության

ունի բացառիկ ընդունակություններով պայմանավորված կրթության

առանձնահատուկ պայմանների կարիք:

չունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք:

ՍՈՎՈՐՈՂԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԵՐԵՒԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է.

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական հաստատության մակարդակի ծառայություններ

Տարածքային մակարդակի ծառայություններ

Ուսուցման և ուսումնառության գործընթացի մատչելիության, ներառականության և արդյունավետության ապահովում
Խելամիտ հարմարեցումների ապահովում
Երկարորյա ուսուցման պլանավորում և իրականացում

Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության հետևյալ ծառայությունները

Հատուկ մանկավարժական ծառայություն

Տևողություն

Շավալներ

- լոգոպեդ
- տիֆլոմանկավարժ
- սուրդոմանկավարժ
- օլիգոֆրենոմանկավարժ
- Էրգոթերապիստ

Հոգեբանական ծառայություն

Տևողություն

Շավալներ

- հոգեբան

Սոցիալ-մանկավարժական ծառայություն

Տևողություն

Շավալներ

- սոցիալական մանկավարժ

Կիրառված գործիքների ցանկ՝ _____

Քնահատողներ՝

Հատուկ մանկավարժ՝ _____

Հոգեբան՝ _____

Սոցիալական մանկավարժ՝ _____

տարածքային մանկավարժահոգեբանական

աջակցության կենտրոնի տնօրեն՝ _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Ես՝ _____ ս, մասնակցել եմ երեխայիս՝
_____ ի գնահատմանը և համաձայն
եմ/համաձայն չեմ գնահատման արդյունքներին: Տալիս եմ/Չեմ տալիս իմ
համաձայնությունը երեխայիս գնահատման արդյունքում արված
առաջարկներին:

Ծնող՝ _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Տրման ամսաթիվ՝ _____

Ձև 3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N

ԵՐԵԽԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ

ԿԱՐԻՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անուն, հայրանուն, ազգանուն՝ _____

Ծննդյան օր, ամիս, տարի՝ _____, **Ծննդյան վկայական՝** _____

Ուսումնական հաստատություն՝ _____

Դասարան՝ _____

Գնահատման սկիզբ՝ _____, Գնահատման ավարտ՝ _____

Եզրակացություն՝

ունի _____ (խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության) խանգարումով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և սովորողին տրամադրվող կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական ծառայությունների _____ (1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ) աստիճանի աջակցության կարիք:

ունի բացառիկ ընդունակություններով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք:

չունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք:

_____ տարածքային/հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրեն՝ _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Տրման ամսաթիվ՝ _____

Ձև 4

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անհատական ուսուցման պլանի գնահատման

Սովորողի անուն, հայրանուն, ազգանուն՝

Ուսումնական հաստատություն՝ _____, Դասարան՝

Ամփոփ նկարագիր (ձեռքբերումներ, առաջընթաց, առկա դժվարություններ)

Առաջարկություններ (առկա դժվարությունների հաղթահարմանն ուղղված աշխատանքների ձևեր և մեթոդաբանություն)

Ուսումնական հաստատության տնօրենի տեղակալ՝

(ստորագրություն, անուն ազգանուն)

_____ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրենի տեղակալ՝

_____ (ստորագրություն, անուն ազգանուն)

Հաստատման օր, ամիս, տարի՝ _____

Ձև 5

_____ տարածքային

մանկավարժահոգեբանական

աջակցության կենտրոնի

տնօրեն _____ ին

ՀԱՅՏ

ԵՐԵՒԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ՓՆԱՀԱՏՄԱՆ ՆԵՐԿԱՅՄՑՆԵԼՈՒ

1. Երեխայի անուն, հայրանուն, ազգանուն՝

2. Ծննդյան օր, ամիս, տարի՝ _____ / _____ / _____

3. Դպրոց, դասարան՝ _____

4. Հասցե, հեռախոս՝ _____

5. Երեխայի ծնողի անուն, ազգանուն՝

6. Դիմումի ներկայացման ամսաթիվ՝

_____ / _____ / _____

7. Դպրոցի տնօրենի դիմում

Հիմք ընդունելով _____ դպրոցի _____ դասարանի սովորող _____-ի ուսումնառության գնահատման արդյունքների վերլուծությունը, խնդրում եմ սահմանված կարգով իրականացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը:

Դպրոցի տնօրեն՝ _____

Ամսաթիվ՝ ____/____/____

Կ.Տ

8. Երեխայի ծնողի համաձայնություն

Ես՝ _____ ս, տալիս եմ իմ համաձայնությունը՝ իրականացնելու երեխայիս՝ _____-ի, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը:

Ծնող՝ _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Ձև 6

_____ տարածքային

մանկավարժահոգեբանական

աջակցության կենտրոնի

տնօրեն _____-ին

ԴԻՄՈՒՄ

ԵՐԵՒԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

Հարգելի տիկին/պարոն _____

ազգանուն

Ես՝ _____ ս, ինդրում եմ Ձեզ իրականացնել
երեխայիս՝ _____ ի, կրթության
առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը:

Ծնող՝ _____

անուն, ազգանուն

Ստորագրություն _____ Ամիս, ամսաթիվ _____

Ձև 7

**ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՆԿԱՐԱԳԻՐ**

Անուն, հայրանուն, ազգանուն՝

Ուսումնական հաստատություն՝ _____, Դասարան՝

**Ուսումնառության ընթացքում արձանագրված կայուն դժվարությունների
ամփոփ նկարագիր**

Հայտորոշիչ և ձևավորող գնահատման ընթացքում հավաքագրած տեղեկատվություն

Ուսումնական հաստատության

տնօրենի տեղակալ՝ _____
(ստորագրություն)

(անուն ազգանուն)

Ամսաթիվ՝ _____

Ձև 8

**ՍՈՎՈՐՈՂԻՆ ՏՐԱՄԱՐԿՈՂ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

ՏԵՍԱԿԸ, ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԾԱՎԱԼԸ

Ծառայությունների ժամկետային և ծավալային ցուցանիշներն ըստ կրթության առանձն կարիքի աստիճանի

**Հատուկ
մանկ
ավարժակա
ն ծառայություն**

**1-ին աստիճան =
հսկում**

**2-րդ աստիճան =
հաճախակի
աջակցություն**

**3-րդ աստ
= մեծ
հաճախակի
աջակցութ**

Լոգոպեդի ծառայություն

Ապահովել
մասնա
գիտական
աջակցու
թյունը`
շաբաթական երկու
անգամ - 30 րոպե
տևողությամբ
(ընդհանուր` 60 րոպե)

Ըստ կարիքի
ապահովել
համ
ապատա
սխան
մասնա
գիտական
աջակցու
թյունը`
շաբաթական երեք
անգամ - 30 րոպե
տևողությամբ կամ երկու
անգամ- 45 րոպե
տևողությամբ
(ընդհանուր` 90
րոպե) րոպե

Ըստ կարիքի
ապահովել
համ
ապատա
սխան
մասնա
գիտական
աջակցու
թյունը`
շաբաթակ
անգամ - 30
տևողությ
անգամ- 45
տևողությ
(ընդհանու
րոպե) րոպե

Տիֆլոմանկա-վարժի
ծառայություն

Ապահովել
մասնա
գիտական
աջակցու
թյունը`
շաբաթական երկու
անգամ - 30 րոպե
տևողությամբ
(ընդհանուր` 60 րոպե)

Ըստ կարիքի
ապահովել
համ
ապատա
սխան
մասնա
գիտական
աջակցու
թյունը`
շաբաթական երեք
անգամ - 30 րոպե
տևողությամբ կամ երկու
անգամ- 45 րոպե
տևողությամբ
(ընդհանուր` 90
րոպե) րոպե

Ըստ կարիքի
ապահովել
համ
ապատա
սխան
մասնա
գիտական
աջակցու
թյունը`
շաբաթակ
անգամ - 30
տևողությ
անգամ- 45
տևողությ
(ընդհանու
րոպե) րոպե

սուրդոմանկա-վարժի
ծառայություն

Ապահովել
մասնա
գիտական
աջակցու
թյունը`
շաբաթական երկու
անգամ - 30 րոպե
տևողությամբ
(ընդհանուր` 60 րոպե)

Ըստ կարիքի
ապահովել
համ
ապատա
սխան
մասնա
գիտական
աջակցու
թյունը`
շաբաթական երեք
անգամ - 30 րոպե
տևողությամբ կամ երկու
տևողությ

Ըստ կարիքի
ապահովել
համ
ապատա
սխան
մասնա
գիտական
աջակցու
թյունը`
շաբաթակ
անգամ - 30
տևողությ

օլիգոֆրենա-
մանկավարժի
ծառայություն

Ապահովել
մասնա
գիտական
աջակցու
թյունը`
շաբաթական երկու
անգամ - 30 րոպե
տևողությամբ
(ընդհանուր` 60 րոպե)

անգամ- 45 րոպե
տևողությամբ
(ընդհանուր` 90
րոպե) րոպե
Ըստ կարիքի
ապահովել
համ
ապատա
սխան
մասնա
գիտական
աջակցու
թյունը`
շաբաթական երեք
անգամ - 30 րոպե
տևողությամբ կամ երկու
անգամ- 45 րոպե
տևողությամբ
(ընդհանուր` 90
րոպե) րոպե

անգամ- 4
տևողությ
(ընդհանու
րոպե) րոպե
Ըստ կարի
ապահովել
համ
ապատա
սխան
մասնա
գիտական
աջակցու
թյունը`
շաբաթակ
անգամ - 3
տևողությ
անգամ- 4
տևողությ
(ընդհանու
րոպե) րոպե

**Հոգեբան
ական ծառայություն**

**1-ին աստիճան = հսկում 2-րդ աստիճան =
հաճախակի
աջակցություն**

**3-րդ աստ
= մեծ
հաճախակ
աջակցուր**

հոգեբանի ծառայություն

Ապահովել
մասնա
գիտական
աջակցու
թյունը`
շաբաթական երկու
անգամ - 30 րոպե
տևողությամբ
(ընդհանուր` 60 րոպե)

Ըստ կարիքի
ապահովել
համ
ապատա
սխան
մասնա
գիտական
աջակցու
թյունը`
շաբաթական երեք
անգամ - 30 րոպե
տևողությամբ կամ երկու
անգամ- 45 րոպե
տևողությամբ
(ընդհանուր` 90
րոպե) րոպե

Ըստ կարի
ապահովել
համ
ապատա
սխան
մասնա
գիտական
աջակցու
թյունը`
շաբաթակ
անգամ - 3
տևողությ
անգամ- 4
տևողությ
(ընդհանու
րոպե) րոպե

**Սոցիալ-
մանկավարժական
ծառայություն**

**1-ին աստիճան = հսկում 2-րդ աստիճան =
հաճախակի
աջակցություն**

**3-րդ աստ
= մեծ
հաճախակ
աջակցուր**

սոցիալական
մանկավարժի

Ապահովել
մասնա

Ըստ կարիքի
ապահովել

Ըստ կարի
ապահովել

ծառայություն

գիտական
աշակցու
թյունը`
շաբաթական երկու
անգամ - 30 րոպե
տևողությամբ
(ընդհանուր` 60 րոպե)

համ
ապատա
սխան
մասնա
գիտական
աշակցու
թյունը`
շաբաթական երեք
անգամ - 30 րոպե
տևողությամբ կամ երկու
անգամ- 45 րոպե
տևողությամբ
(ընդհանուր` 90
րոպե) րոպե

համ
ապատա
սխան
մասնա
գիտական
աշակցու
թյունը`
շաբաթակ
անգամ - 3
տևողությ
անգամ- 4
տևողությ
(ընդհանու
րոպե) րոպե

»: